

Ես շնորհակալ եմ, Ալեքսանդրին Յուրգանով, Դմիտրիյին Կուրինսկիյ մտքերի բաժանելու ու աջակցության համար:

Ալեքսանդրին Կրասկենիցկիյ մեծ խմբագրական գործի ու արդյունավետ փոխազդեցության համար:

Իմ եղբայրին Դավիթին ու Երազիկին Հարությունյան հայկական բնագրի հետ օգնության համար:

Վլադիմիրին Տրոյան առաջին փիլիսոփայական ոգևորության համար:

Իմ Ծնողներին սսեն ինչի համար:

Փիլիսոփայական Սկզբունքներ

Ներածություն

1. Եթե ես հնարավորությունը ունենայի ընտրելու՝ ու՞մ հետ ժամանակ անկացնել. Սոկրատի կամ Միդհարթայի, թե Չալմերսի կամ Վիտգենշտեյնի հետ՝ ես անշուշտ կպատասխանեմ. Սոկրատի կամ Միդհարթայի հետ:

2. Ավելին, չնայած ես անկասկած ընտրեի այս տարբերակը, իրականում այս հանդիպումը ինձ համար լինեի ոչ թե գունագեղ ու հանելի ժամանց, այլ մի դժվար ու սարսափելի իրադարձությունը: Քանի որ իմ կյանքի համար այս դեպքը վճռական լինեի:

3. Այս ամեն ցույց է տալիս, թե ի՞նչ է ինձ համար իրական փիլիսոփայությունը: Ու այս դեպքում ինձ նույնիսկ պետք չի դատել դրա մասին. իմ գիտակցությունն այստեղ ավելին գիտի, քան իմ դատողությունը:

4. Սթափության ակադեմիական քնից հետո, ես գիտակցել եմ, որ իմ հարարժան տարակուսանքներն ու անորոշ թախիծը, որոնք շատ երիտասարդ տարիքից իմ կենսակերպի մասին էին և իմ ճանաչած տեսական դրույթների նկատմամբ ունեցած բանականության անբավարարվածությունը անբաժանելի են: Եվ ես չեմ կարող բավարված լինել, եթե հետևեմ միայն մեկ ճանապարհին, թողնելով մյուսը:

5. Որոշ փիլիսոփայական, կրոնական, գիտական գաղափարների հետ ծանոթանալուց հետո ես չեմ գտել մի միասնական առանցք, որ կարողանա ինձ համար համակարգել ամեն ինչ ու իմ որոնումների ավարտ դառնալ: Եվ ես որոշել եմ օգտագործել սեփական խելքս, որը միակ ելքն է եղել այս կացությունից:

6. Բայց երբ ես սկսել եմ այս գործը, իմ բնական մղումը վերածվել է սուտ ու դատարկ գոռոզության գործողության, որի համար փոշմանում եմ: Դրա համար ես շատ անգամ արդյունքներից հրաժարվում էի ու սկսում էի սկզբից: Ժամանակի հետ ես՝ իմ կարծիքով՝ գտել եմ այս գործը ավարտելու ճիշտ եղանակը:

7. Ես այդ աշխատանքը չէի գրում որպես գրական ստեղծագործություն: Ես միայն այն մտքերը գրացնում էի, որոնց հայտնաբերում էի որոշակի անդորրի ու մտասևեռման պահերին: Ավելին, ես թողել եմ միայն այն մտքերը, որոնք անմիջականորեն զգում ու վերապրում էի, որոնց մասին չէի ունենում ոչ մի տարակուսանք: Հետևաբար, այդ մտքերը, իմ կարծիքով, բանականության խաղ չէին:

Նաև ես ջանում էի խուսափել երկու արդիական, սակայն դարավոր արատներից. մի օրիգինալ բան հնարելու նկրտել և միաժամանակ տուրք տալ ընդունված հեղինակություններին: Ինձ համար շատ կարևոր է եղել ստեղծել բացարձակապես թափանցիկ ու պարզ գործ, որը կլինի հստակ, առավելագույն հակիրճ և գուրկ գրական ու տեքստային ազդեցություններից:

8. Աշխատանքս ավարտելուց հետո պարզեցի, որ, չնայած ներկա պահին ես շատ եմ դժվարությունների հանդիպում, սակայն իմ խռովված միտքն ու ձգտումները, որոնք իմ ուղեկիցն էին ի սկզբանե, արդեն հանդարտված են, և որոշակի ժամանակ անց կարելի է վերադառնալ առօրյա կյանք: և ես չլինեմ ազնիվ, եթե չեմ ասի, որ ես գտել եմ, թե այս գործի որոշակի մասերն և նրանց ամբողջությունը կարող են փիլիսոփայության նրա կենտրոնական հարցերի նոր հասկացում տալ:

Սկզբունքներ

9. Ամենը, ինչ գոյություն ունի՝ շարժում է: Ու շարժումն է այն ամենը, ինչ ապրում, գոյատևում է: Ես չեմ կարող գտնել մի բան, որ շարժում չլինի, շարժման մեջ չլինի. անգամ այն, ինչը համարում եմ անշարժ, նա էլ է շարժվում, բայց ինձ համար՝ միայն ժամանակի մեջ, այլապես ես նրա անշարժ չէի կարող համարել: Օրինակ, մի եռանկյունի կամ թվի (թող սա 1 լինի) գաղափարը ինձ համար ենթադրաբար անշարժ ու անփոփոխ միայն այն պատճառով, որ ես սրա մասին ուրիշ բաների փոփոխության հետ հարաբերակցության մեջ եմ մտածում. Ուրեմն սա իրականում մնայունության շարժումն է, այսինքն որոշ հարարժան բանի շարժումն է ժամանակի մեջ:

10. Բայց եթե շարժումը գոյություն ունի, ապա ժամանակը չի կարող գոյություն ունենալ: Եթե շարժումը ներկա գնտվում, նա ունի կոնկրետ գոյության պահեր. Ուրեմն՝ կամ ժամանակը չկա, կամ շարժումը: և շարժումը կա: Այսինքն. որպեսզի մի պահ՝ օրինակ, այլ մարդու իմ շոշափման՝ կլինի, պետք է իմ մատը որոշակի դիրքերի շարքն անցնի, ու միայն այս պայմանը թույլ կտա նրան այլ մարդու հասնել ու դիպչել: Ու հենց սա անհնար է դարձնում ժամանակի գոյությունը: Որովհետև մի կոնկրետ պահի ընթացքում բոլոր նախորդ պահերը արդեն գոյություն չունեն: Նրանք չեն կարող գոյանալ, քանի որ նրանք՝ անցյալ են: Որևէ մի պահ, որ հիմա է գոյանում, պետք է բացառի այս ժամանակի դիրքում որևէ ուրիշ պահի գոյություն: Եվ կարևոր չէ՝ ինչքան կարճ ժամանակի պարբերություն է անցել: Դրա համար էլ անհնար է, որպեսզի անցյալ, ու, հետևաբար, ժամանակ լինի, եթե կա այլ մարդուն իմ շոշափումն, եթե կա շարժում: Ուրեմն ժամանակ գոյություն չունի:

Այս թեզիսի որոշ քնարկման մեջ ես քննադատած եմ եղել տարածական փոփոխության հարաբերության օգտագործելու համար: Այստեղ ես այս ու ամեն համանման նկատողության պատասխանում եմ: Մենք կարող ենք մտածել յուրաքանչյուր կացության մասին: Օրինակ, որ ոչինչ չի պատահում, կամ ոչինչ տարածության մեջ չի գոյանում: Որ մի կացությունը՝ կարևոր չի,

ինչպիսին է բանը կամ ընթացքը ներկա գտնվում՝ միայն շարունակում է նույնը մնալ: Սա ուրիշ էլքը չունի: Այս ինքը բացարձակ անշարժության ու անփոփոխության կամ ընդհանրապես առանց նյութական բաների բացարձակ հարատևության կացությունը միայն այդ դրության անցյալից ներկային հաղորդման պայմանով հնարավոր է: Եվ հենց սա, նույն պատճառով, անհնար է, եթե ժամանակը գոյանում:

11. Եթե ժամանակը գոյություն չունի, ապա պատճառ կոչվածը նույնպես գոյություն ունենալ չի կարող, քանի որ պատճառը կարող է գոյություն ունենալ միայն ժամանակի մեջ: Օրինակ, պատճառը, որ շնորհիվ ես ապրում եմ հիմա՝ իմ ծնունդն է քսանյոթ տարի առաջ, և ես նստած եմ հիմա, որովհետև ես տասը րոպե առաջ նստել եմ, հետևաբար, անհնար է, որպեսզի պատճառը ու նրա արդյունքը լինեն, եթե ժամանակը չկա:

12. Դրա համար պետք է հասկանալ, որ ամեն մի գոյության պահ, յուրաքանչյուր գոյության կացություն ոչ մի ուրիշ բան չի ենթադրում ու չի պարունակում, բացի հենց իր բովանդակությունից: Իսկ այս բովանդակությունը չի ենթադրում ոչ մի այլ բան, ոչ մի անցյալ գոյություն, բացի իր իսկ գոյությունից, որ հիմա որպես անցյալ է գոյանում: Նա գոյանում է որպես անցյալ, բայց նա չի անցել, այլ գոյություն ունի ժամանակից դուրս:

13. Դրա համար ոչ մի պատմություն, ոչ մի բովանդակություն չի կարող ոչ մի գոյության հիմքն ու պատճառը հանդիսանալ: Այս պատմությունը, որ ես իմ այժմեական դիրքի ու իմ անձի հիմք և պատճառ եմ համարում, իրականում չի կարող պատճառը լինի: Նա պատճառ չի: Ավելին, ոչ մի պատմություն, որ ես կարող եմ պատկերացնել՝ չի կարող իմ դիրքի, իմ անձի համար պատճառը լինի:

14. Բայց այս առթիվ հարցն է առաջանում. եթե ես ոչ մի պատմության ու ոչ մի պատճառի հետ չեմ կապված, ապա ես ի՞նչ եմ: Առաջին բանը, որը կարող եմ մտածել, այն է, որ ես այս պատմություններն ու այս բովանդակությունն ըմբռնողն եմ: Բայց սա անհնար է: Ոչ մի ըմբռնում հնարավոր չի հայտնաբերել: Ես չեմ կարող ասել ո՛չ որ ես մի բան ըմբռնում եմ, ո՛չ որ ես ըմբռնումն եմ: Որովհետև ամեն մի իմ միտք, ամեն մի իմ պատկեր, որոնք ինձ որպես ես են ներկայացնում, իրականում մի գոյություն է, որը ոչ մի սահմանագատում չի պարունակում: Իրոք, «ըմբռնում»՝ նշանակում է միայն այն, որ մի բան ինձ համար գոյություն ունի, և ոչինչ ավելին: Բայց «ինձ համար գոյություն ունի» նշանակում է միայն այն, որ զգացմունք կամ միտք կա, որը «ես» պատկերն է պարունակում, և ոչինչ ավելին: Հետևաբար, թե զգացմունքը, թե միտքը իմ մասին, և ամեն մի ուրիշ զգացմունք թե միտք՝ այն է, որը գոյանում է, որը որևէ շարժման մեջ է պարունակվում, որը կա:

15. Չզգացմունք թե միտք, որ որպես «ես» է ներկայանում, ոչ մի կերպ ուրիշ բովանդակությունից չի զանազվում, եթե ոչ միայն իր բովանդակությամբ: Ասել. «ես ըմբռնում եմ» նշանակում է միայն, որ «ես» միտքը կամ կերպարը կա, և ոչ մի ըմբռնում հնարավոր չի հայտնաբերել: Դրա համար մենք կարող են ասել՝ չկան այս հասկացությունները. “ըմբռնում” և

“ընթացություն”, և “ես” հասկացությունը ընդհանրապես անհնար է գտնել: Մենք ընդհանրապես չենք կարող խոսել “ես”–ի մասին:

16. Ցանկացած ուրիշ բովանդակություն, որ կարող է լինել այս գոյության փոխարեն նույն կերպ կըմբռնվի. քանի որ նա նույնպես կներկայանա նման մի ըմբռնում ու պատմություն: Եվ ոչ մի ըմբռնող սուբյեկտ իրականում չի լինի: Նման բան չկա:

17. Հարմարության համար ես կշարունակեմ օգտագործել «ես», «մենք» և այլ բառեր, քանի որ այստեղ լեզվական հարցեր շոշափելու նպատակ չունենմ:

18. Բայց եթե այս գոյությունը չի կարող որևէ պատճառ ունենալ, ապա ինչու՞ նա այնպիսին է: Ինչպե՞ս է նա առաջանում և հիմնավորվում: Այստեղ պարզ են երեք բաներ:

19. Առաջին՝ այս գոյությունը չի բովանդակում ու չի կարող բովանդակել ոչինչ, որ պարզաբանի իր իսկ գոյությունը: Երկրորդ՝ այս կացությունը մեզ դեպի մի այլ գոյություն է հղում, և այս հղումը բխում է հենց այդ կացությունից, թեպետ այդ գոյությունը ներկա չի գտնվում և այդ գոյությունը չի կարող հայտնաբերվել: Երրորդ՝ այդ ուրիշ գոյությունը մեզ համար չկա, ոչ որովհետև մենք չենք կարող նրա ճանաչել, քանի որ ոչ մի ըմբռնում ու սուբյեկտ չկա, այլ այստեղ նա չկա, որովհետև ինքը գոյությունը հենց այդ ձևն ունի, և դա մեր ճանաչելու կարողության սահմանափակությունը չի, դա ինքը գոյությունն է:

20. Մենք պարզորոշ կարող ենք ասել, որ ամեն մի գոյություն, որ առաջանում է «ես» գաղափարից՝ սխալ է, սա սխալ գոյություն է: Չայրույթ, գոռոզություն, ահ, նախանձ և ուրիշ հայտնի գոյության կացությունները, որոնց աղբյուրը «ես» գաղափարի մեջ է՝ սխալ են: Բայց մենք չենք կարող ասել, ինչ է սա նշանակում, և ինչ է դրանից հետևում:

21. Մենք չենք կարող ոչ մի մեղք կամ երախտիք գտնել: Ամեն մի “իմ” գոյություն բացառում է այս հնարավորությունը: Ես ինչ-որ կերպ չեմ կարող ունենալ սեփական գոյություն, կամ ինչ-որ կերպ ազդել այդ գոյության վրա: Յուրաքանչյուր կացություն, որ կա որպես իմ սեփական գոյություն, նույն կերպով է գոյանում: Տարբերություն չկա. ես իմ կամքն ու իմ կայունությունը, իմ ուժերն ու բարի արարքների զգցմունքներն եմ ընկալում, և մի լավ բան եմ անում, թե իմ թույլությունն ու կամազրկությունն եմ զգում ու մի վատ բան եմ անում: Այս տարբեր գոյությունների բովանդակությունները ամեն անգամ նույն կերպով են դրսևորվում: Ես արդեն իսկ նրանց վերապրում եմ, ու չեմ կարող ինչ-որ միջոցով նրանց վրա ազդել: Ես չեմ կարող վճռել կամ ընտրել, թե ինչպիսին կացություն ու բովանդակություն հիմա կլինի: Նրանք արդեն ներկա են գտնվում, և «ես» զգացմունքը՝ միայն նրանց մասն է, որը ոչ մի կերպ չի կարելի նրանցից զատել ու ընդհանրապես հայտնաբերել: Այդ իսկ պատճառով էլ հնարավոր չի գտնել ոչինչ, որ պատասխանատու կլինի երախտիքների կամ մեղքերի համար: Եվ «երախտիք» ու «մեղք» էլ ոչ մի պատմություն կամ ժամանակ չունեն:

22. Այս կացության հասկացողությունը կօգնի «ես» գաղափարից ազատագրվել: Պետք է հասկանալ, որ ամեն մի գոյություն, որ հնարավոր է այս

բովանդակությամբ փոխարինել՝ կներկայանա որպես ես: Քանի որ նրա
բովանդակությունից անկախ այս գոյությունը կլինի նույն բանը: